ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 163- Ա **27 մայիսի 2015 թ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԾՈՎԱՍԱՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՁԵՎՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԾՈՎԱՍԱՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի, 68-րդ հոդվածի 7-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածների, Հայաստանի Հարապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման պահանջները

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման ձևով վերակազմակերպել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմավորման ձևով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպելու կարգը՝ համաձայն հավելված 1-ի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի հետգնման և մարման կարգը՝ համաձայն հավելված 2-ի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի.

4) փոխանցման ակտը և սեփականության իրավունքով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը՝ համաձայն հավելված 4-ի և հավելված 5-ի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Մ. Խլղաթյան՝ սեղմ ժամկետում ապահովել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության պետական գրանցումը:

4. Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41 – Ա որոշման 7-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի՝ սահմանել, որ կանոնադրության, ինչպես նաև շենքերի և շինությունների գույքային իրավունքների պետական գրանցումները իրականացվելու են Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

5. Մինչև օրենքով սահմանված կարգով տնօրենի նշանակումը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովասարի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Մ. Խլղաթյանին:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանին:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ